



Գերազնորի Տ. Վահան Եպս Յովհաննեսեան

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՖՐԱՆՍԱՅԻ ԹԵՄ

DIOCÈSE DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE DE FRANCE

Son Éminence Monseigneur Vahan Hovhannessian

## ԿՈՉ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՊԵՅՐՈՒԹԻ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ

Գերազնորի Վահան Եպիսկոպոս Յովհաննեսեան  
Առաջնորդ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ֆրանսայի

Ցաւօք սրտի ստացանք քստմնելի լուրը սարսափազդու պայթումին՝ Լիբանանի մայրաքաղաք՝ Պէրութի մէջ՝ որ տեղի ունեցաւ Երէքշաբթի, Օգոստոս 4-ի երեկոյեան:

Ըստ մէզ հասած տուեալներուն Պէրութի նաւահանգիստը ամբողջովին քանդուած է եւ այնտեղ գտնուող ցորենի շտեմարանը հրոյ ճարակ դարձած: Նաւահանգիստին մօտակայ, սփիւրքահայոց կեդրոն՝ հայահոծ Պուրճ Համմուտն ալ մեծ վնասներ ստացած է նեռարեալ զանազան եկեղեցական եւ ազգային կազմակերպչական կեդրոններ: Պայթումի պատճառով վիրաւորուած եւ մահացած են աւելի քան չորս հազար մարդիկ: Ն.Մ.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, այցելած է վնասուած վայրերը եւ մեր ժողովուրդը այնտեղ, որ շատ մխիթարական է մանաւանդ այս վիճակին մէջ:

Այս ցաւալի առիթով Ֆրանսահայոց առաջնորդարանը դրամահաւաք մը կը կազմակերպէ: Թեմական Խորհուրդի անունով եւ անձամբ իմ անունովս՝ կոչ կրնեմ մեր ժողովուրդին Ֆրանսայի մէջ որ մասնակցին այս դրամահաւազին եւ առատաձերն օգնեն մեր քոյրերուն եւ եղբայրներուն Լիբանանի մէջ:

Կոչ կրնէք մասնաւորաբար մեր ծխատէր քահանաներուն եւ Ծխական Խորհուրդի անդամներուն որ ազդուօրէն նուիրուին այս ազգանուէր եւ Աստուածահաճոյ դրամահաւաքի առաքելութեան իրենց ծուխերէն ներս:

Կ'աղօթէք որ Աստուած հասնի Լիբանանի ժողովուրդին եւ մեր համայնքին եւ եկեղեցիին Պէրութի մէջ: Թող Ամենակալը օրհնէ, օգնէ, պահէ եւ պահպանէ մեր Կաթողիկոսութիւնը, ժողովուրդն ու սիրելի Լիբանանը: Աստուած Ձերդ Սրբութեան ոյժ, համբերութիւն եւ կարողութիւն տա մանաւանդ այս դժուարին օրերուն ընթացքին:

Օրհնութեամբ՝  
+Վահան Սրբազան  
Առաջնորդ